Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2809

2

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆՑ

ՊԱՐՍԿԱ—ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ

ՕԳՏԻՆ

ՅԸՆԹԱՑՍ 1902 ԹՈՒԻ.

ՆՈՐ—ԶՈՒՂԱ ՍՊԱՀԱՆ

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆԱՑ

1903

14368

Մի քանի խօսք

Պարսկաստանում Հայերն ընդհանրապէս համարուել են առաջաւոր տարր վաճառականութեան, երկրագործութեան և կրթութեան մէջ, ի հարկէ, համեմատելով տեղական այլ ազգաբնակութեանց հետ։

Հէնց այս երևոյթն է եղել գլխաւոր պատճառը, որ Իրանի Վեհապետները և Նախարարապետները միշտ հովանաւորել են Հայերին, շնորհել են Հայ ժողովրդին հրովարտակներով (ֆերմաններով) արտօնութիւններ վաճառականական, կրթական և այլ խնդիրներում։

Ներկայ Վեհապետի Մուզաֆար-էդ-դին Շահնշահի և Աթաբէկ-Ազամի գլխաւոր նպատակն ու աշխատանքն է բարձրացնել Պարսկաստանը տնտեսապէս և մտաւորապէս։ Քաջալերում են և Բարձր հովանաւորութեան արժանացնում յատկապէս կրթական գործը, որ շատ յետ է մնացել Պարսկաստանում։ Երկու տարի առաջ ևս «Հզօր արքայական ֆերման» շնորհեց Հայ ժողովրդին՝ դպրոցներ բազմացնելու և զարկ տալու Պարսկաստանի ընդհանուր քաղաքակրթական շարժման։

Այժմ ամենալուրջ և անյետաձգելի խնդիրը պարսկահայոց համար կրթական գործն է. սակայն այդ կողմից իրականութիւնը, դժբախտաբար, անմխիթար է։ Բազմաթիւ հայաբնակ գիւղեր խաւարի մէջ են գտնուում զրկուած տարրական կրթութիւնից. գիւղերի ընտրեալներէ որդիքը միայն տգէտ տիրացուների մօտ այբ-բեն-գիմ սովորում, սաղմոս աւետարան թուլթակի նման կարդում։ Անհրաժեշտ կարիք և պահանջ կայ շուտով բանալ գիւղական դպրոցներ. իսկ Թէհրանում, Թաւրիզում և Զուղայում ունենալ մի-մի միջակարգ կազմակերպուած դպրանոց։ Այս խնդրի մասին շարունակ խօսւում, գրւում է լրագրութեան մէջ, սակայն մեծ մասամբ մնում է «Ձայն բարբառոյ յանապատի»...

Գուցէ այնքան էլ պէտք չէ զարմանալ, քանի որ դա մեզ յատուկ է, մեր սովորական անտարբերութիւնն այստեղ ևս իշխում է. նպաստաւոր պայմաններն երբ անցնում են յաճախ անդառնալի, սկսում ենք ցաւալ, ափսոսալ, բայց արդէն շատ ուշ է լինում։

Կար ժամանակ երբ կարելի էր լետաձգել մեր կեանքում մի որևէ խնդրի իրագործումը, կամ դանդաղ քայլերով յառաջ տանել և գուցէ մեծ վնաս էլ չկրէինք. սակայն այսօր պայմանները միանգամայն փոխուած են, գոյութեան մաքառումը դժուարացած, մրցակից կամ կլանող զօրեղ հոսանքները բազմացած են. նախկին շաւղով ընթանալ նշանակում է զրկուել շատ բաներից, և քայքայել մեր սակաւաթիւ հիմնարկութիւնները։ Անտարբերութիւնը միացած անհեռատեսութեան հետ մեր անցեալ կեանքում ամենայն տեղ մեզ անբուժելի հարուածներ է հասցրել, այսօր ևս նոյն հասարակական ցաւը մաշում հիւծում է մեր կազմը, ոչնչացնում բարոյապէս։ Փաստեր շատ կան թէ անցեալ և թէ ներկայ մեր ազգային-հասարակական կեանքից. մեր շուրջը նայենք շատ կտեսնենք։

Զափազանցութիւն չէ ասածս այլ ցաւալի իրողութիւն։ Որչափ կարողացել եմ այս երկու-երեք տարուայ ընթացքում ծանօթանալ պարսկահայոց կեանքի և ամբողջ շրջապատող պայմանների հետ, եկել եմ այն եզրակացութեան, որ եթէ անհոգութեամբ և անտարբերութեամբ վերաբերուինք դէպի պարսկահայոց կրթութեան գործը, շատ մօտիկ ապագայում պարսկահայերը կկորցնեն իրենց նշանակութիւնը, կդառնան մի անանուն տարր։

Յատկապէս Պարսկաստանի Հայերի վերայ բարոյական մեծ պարտք է դրուում լուրջ կերպով աշխատել մեր դպրոցների համար և շուտով արդարացնել Արեգականափայլ Շահնշահի ֆերմանի մէջ յայտնած յոյսերը, որոնք ուղղուած են դէպի Իրանի մտաւոր, բարոյական և տնտեսական յառաջադիմութիւնը։

Պարսկա—Հնդկաստանի Թեմի Հայոց կրթական գործի գրութեան մասին շուտով հրատարակուելու է առանձին տարեկան տեղեկագիր վիճակագրական տեղեկութիւններով։ Իսկ այժմ հրատարակում եմ այն օժանդակող անձանց ցուցակը, որոնք բարեհաճեցին յանձնել ինձ 1902 թուին իրենց կամաւոր նուէրները յօգուտ Պարսկա—Հնդկաստանի Թեմի կրթական և այլ ազգային բարեգործական հաստատութեանց։

Մայիս 20. 1903 թ.
Ն.—Զուղա (Սպահան).

14368

ՊԵՄ

1902 թ. ստացած

ՄՈՒՏՔ

Համար	Նուիրատուների անուն և ազգանունները.	Ռուբլի	Կոպ.	Գումար Ռուբլի	Գումար Կոպ.	Ղրան	Զահի
	Մոսկուա						
1.	Մեծպ. Գրիգոր Խալաթեանց	200					
2.	» Գէորգ Կարօտկեան	200					
3.	» Առևտրական տուն Ս. Հախնազարեան, Գ. Աբեանց, Ա. Ներսէսեան և Ընկեր".	250					
4.	» Եղբարք Տէր Մկրտչեանց	300					
5.	» Մկրտիչ Տերեան	100					
6.	» Մինաս Լազարեան	100					
7.	» Սարգիս Դուլզարեան	100					
8.	» Աւետիս Պողոսեան	100					
9.	» Բաղդասար Արզումանեան	200					
10.	» Բաղդան Արուշանեան	50					
11.	» Ստեփան Մամիկոնեան	100					
12.	» Սարգիս Խրճեան (Նոր—Նախիջևանցի)	100					
13.	» Մինաս Նորշորեան	300					
14.	» Աբսենտ Մասլով	200					
15.	Տիկին Հռիփսիմէ և Մինաս Մուրադեան	100					
16.	Մեծպ. Եղբարք Խրմաճեանք	200					
17.	» Մովսէս Սահարբէկեան	100					
18.	» Յովհաննէս Զառաֆեանց	100					
19.	» Յովհաննէս Աւետիսեան	100					
20.	» Աբրահամ Բունիաթեան	50					
21.	» Սարգիս Յակովբեան	50					
22.	» Գրիգոր Սուլթան-Շահ	50					
23.	» Միքայէլ Միրզայեան	50					
24.	» Եղոր Տէր Յարութիւնեան	50					
25.	» Կարակաշեան	25					
26.	Տիկին Հեղինէ Միանսարեան	50					
27.	Մեծպ. Արտիմ Կանդուբալեան	25					
28.	» Իւզբաշեան	30					
29.	» Աղաբէգ Գէորգեան	300					
30.	» Կարապետ Թամանցեան	100					
31.	» Ստեփաննոս Թումեանց	25					
32.	» Մկրտիչ Մելիքենցեան	100					
33.	» Նիկողայոս Ջանումեան	100		3905			
	Փոխադրեալ			3905			

Նուիրատուութեանց Հաշուեկշիռը (Ա)

ԵԼՔ

Համար	Ո՞ր հաստատութեանց է տրուած.	Ղրան	Զահի	Գումար Ղրան	Գումար Զահի	Ծանօթ.
	Տրուած է					
1.	Ջուղայի երկսեռ Դպրոցաց	8850				
2.	Ղազուինի Դպրոցին	600				
3.	Վանաք գիւղի Դպրոցին	200				
4.	Ս. Կատարինեան Մենաստանի արհեստանոցին	2000				
5.	Ամենափրկչեան Վանքի Տպարանի համար իրեր	177	6	11827	6	
	Մնում է					
	Եղբարց Թումանեանց վաճառատանը տոկոսով (Թեհրանում)	16331	12			
	Ամենափրկչեան Վանքում կանխիկ	4997	2			
	Ապառիկ է մնացած Նոր—Նախիջևանում (200 բուբլի որ ստացուելու է շուտով)	1180		22508	14	
	Սոյն 22508 ղ. 14 շ. պիտի տրուի հետևեալ հիմնարկութիւններին՝					
	ա. Համադանի Հայոց Դպրոցի շինութեան համար (բացուելու է 1903 թուից) ղրան 2500					
	բ. Նոյն Դպրոցի գրասեղանների, գրատախտակների և գրադարանի համար ղրան 1500					
	գ. Ղազուինի Դպրոցին ղ. 500					
	Փոխադրեալ			34336		

ՄՕՏՏՔ

Համար	Նուիրատուների անուն և ազգանունները	Ռուբլի	Կոպ.	Գումար Ռուբլի	Գումար Կոպ.	Ղրան	Զահի
	Փոխադրեալ			3905			
	Պետերբուրգ						
34.	Վսեմ. Իշխան Սիմէօն Աբամելիք Լազարեան	500					
35.	Պետերբուրգի Հայ ուսանողներ	252	50				
36.	Տոկոս վերոյիշեալ գումարի Մոսկուայի «Իւնկեր» դրամատնից	60	20	812	70	28354	
	Սոյն ամբողջ 4717 ր. 70 կ. (3905+812 ր. 70 կ.) գումարը Թեհրանում վերածուեց պարսկական դրամի ռուբլին 6 ղրանով։						
	Ն.—Նախիջևան						
37.							
38.	Մեծպ. Յովհաննէս Պալեան	310					
39.	» Քերովբէ Մ. Պոպովեան	100					
40.	» Մանուկ Մ. Պոպովեան (և տարեկան 50 ռուբլի)	100					
41.	» Սահակ Թոփալեան	25					
42.	» Աստուածատուր Զուգալեան	25					
43.	» Արամ Ղ. Շապովալեան	50					
44.	» Սարգիս Քիստեան	200					
45.	Բաղու						
46.	Մեծպ. Սիմէօն Առաքելեան	100					
	» Սամսոն Յարութիւնեան	25					
	» Յովհաննէս Սաղաթիելեան	10		945		5575	10
47.	Ռուբլին հաշուած 5 ղր. 18 շ. Եղբարց Թումանեանց վաճառատնից տոկոս։					406	10
	Գումարն է			5662	70	34336	

ԵԼՔ

Համար	Ո՞ր հաստատութեանց է տրուած.	Ղրան	Զահի	Գումար Ղրան	Գումար Զահի	Ծանօթ.
	Փոխադրեալ			34336		
	դ. Ամենափրկչ. Վանքի մատենադարանի շինութեան նպաստ. ղրան 3000					
	ե. Ջուղայի Կեդրոնական Դպրոցի գրավաճառանոցին և Ս. Կատարինեան օրիորդաց Դպրոցին ղրան 5000					
	զ. Կեդրոնական Դպրոցի նորոգութեան հմր. ղ. 1000					
	է. Ս. Կատարինեան արհեստանոցին ղրան 500					
	ը. Վանաք գիւղի Դպրոցին ղրան 1000					
	թ. Ղարաղանի Լաւ գիւղում Դպրոց հաստատելու համար նպաստ ղրան 3000					
	ժ. Զիգան գիւղի Դպրոցի շինութեան նպաստ ղ. 2000					
	ժա. Ջուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան աղքատ աշակերտուհեաց գրքերի զգեստի համար ղրան 500					
	Մնացեալ 2008 ղրան 14 շ. (Եղբարց Թումանեանց վաճառատնից ստացուելիք տոկոսների հետ) կգործադրուի կարիք ունեցող Դպրոցների վերայ Գերապատիւ Առաջնորդի և Դպրոցաց Թեմական Վերատեսչի շրջագայութեան ժամանակ 1903 թ. Յուլիս-Օգոստոս ամիսներին. մանրամասն հաշիւը կտպագրուի.					
	Գումարն է			34336		

1902 Թ. ստացած միանուագ նուիրատուութեանց ցուցակը (Բ)

Համար	Նուիրատուների անուն և ազգանունները	Րուբլի	Ղռան	Ո՞րտեղ է բացուած Դպրոցը	Ծանօթ.
	Մոսկուա				
1.	Տիկին Վառվառէ Քանանեանը նուիրեց Փերիա գաւառի Նամակերտ գիւղում միդասեան Դպրոց բանալու համար 4000 րուբլի ի յիշատակ իւր Եղբօր հանգուցեալ Յովհաննէս Յովհաննեանի Ռուսական դրամը վաճառւեց Թեհրանում՝ րուբլին 5 ղռան 18 շահով:	4000	23800	Յովնանեան Դպրոցը բացուած է Նամակերտ գիւղում	Դրամագլուխը գտնւում է Թեհրանում Եղբարց Թումանեանց վաճառատանը տոկոսով:
	Ծանօթ. Աղնուափայլ Տիկին Վառվառէ Քանանեանը ի յիշատակ իւր ամուսնոյ Գէորգ Քանանեանի հիմնեց Ն.—Ջուղայում Գէորգ Քանանեան Դպրոց. շինութիւնն արդէն կառուցւում է: Դպրոցի դրամագլուխն առայժմ 40 հազար րուբլի է. սորա մասին առանձին կհրատարակուի:				
2.	Տիկին Տիրուհի Պօղովեանը նուիրեց 4000 րուբլի Ջուղայի վիճակի Հայաշատ գիւղերից մէկում միդասեան Դպրոց բանալու համար ի յիշատակ իւր ամուսնոյ Մարգար Պօղովեանի Ռուսական դրամը վաճառւեց Թեհրանում՝ րուբլին 6 ղռանով:	4000	24000	Պօղովեան Դպրոցը բացուած է Չարմահալ գաւառի Լիվասեան գիւղում.	Դրամագլուխը գտնւում է Թեհրանում Եղբարց Թումանեանց վաճառատանը տոկոսով:

Համար	Նուիրատուների անուն և ազգանունները	Րուբլի	Ո՞րտեղ է բացուած Դպրոցը	Ծանօթ.
	Մոսկուա			
3.	Մեծպ. Յակովբ Էքիզլերը նուիրեց 4000 րուբլի Ջուղայի վիճակում մի գիւղական Դպրոց բանալու համար ի յիշատակ իւր հօր՝ հանգուցեալ Տիրան Էքիզլերի	4000	Էքիզլերան Դպրոցը բացուած է Փերիա գաւառի վերին Խօյգեան գիւղում:	4000 րուբլի դրամագլուխն առայժմ գտնւում է նուիրողի մօտ. շուտով տեղափոխելու է:
	Ծանօթ. Վերոյիշեալ գումարները (12 հազար րուբլի) պիտի մնան իբրեւ անձեռնմխելի դրամագլուխ. այդ է նուիրողների ցանկութիւնն եւ այդպէս է հրամանագրել ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ: Կսլուածք կարելի է գնել ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ թոյլտուութեամբ:			
	Բագու			
4.	Մեծպ. Եղբարք Գերասիմ, Յովհաննէս, Տիգրան և Նիկողայոս Թումայեանք նուիրեցին Նոր—Ջուղայի Ս. Ամենափրկիչ Վանքին արագատիպ մեքենայ և նոր տառեր գնելու համար 3000 րուբլի ի յիշատակ իրենց հօր՝ հանգուցեալ Յովսէփ Թումայեանի	3000		Նոր տառերն արդէն ստացուած են 970 րուբլի արժողութեամբ. իսկ արագատիպ մեքենայի պատուէրն եւս տրուած է. շուտով կստացուի:

1902 թ. Տարեկան նուիրատուութեանց ցուցակը (Գ).

Համար	Նուիրատուների անուն և ազգանունները	Բուբլի	Ո՞րտեղ է բացուած Դպրոցը	Ծանօթ.
	Պետերբուրգ			
1.	Պետերբուրգի ծխականներից Մեծ. պ. Պօղոս Սուլթան Շահ, պ. Բժշկապետ Վ. Վարդանեան Դր. Մակարեան և Յ. Աւանեան ուղարկելու են ամենայն տարի երեք հարիւր բուբլի ծխականներից	300	Դպրոցը բացուած է Զարմահալ գաւառի Սիրաք գիւղում.	1. Դպրոցներ տարեկան նուիրատուներ 1902—1903 ուսումնական տարում
2.	Հայոց Եկեղեցեաց Խորհրդարանը որոշում կայացրեց 1902 թ. Մարտի 13-ին վաւերացմամբ Թեմական Առաջնորդի՝ տալ տարեկան Նոր—Զուղայի Դպրոցաց նպաստ երեք հազար բուբլի	3000	Նպաստը տրւում է Ն.—Զուղայի Կեդրոնական և օրիորդաց Ս. Կատարինեան միջնակարգ Դպրոցներին	
3.	Տիկին Թամար Սրամեան ամենայն տարի ուղարկելու է միգասեան գիւղական Դպրոցի պահպանութեան համար երեք հարիւր բուբլի	300	Սրամեան Դպրոցը բացուած է Բուրվարի գաւառի Սանդսֆիդ գիւղում	
	Ռոստով (Ն.—Նախիջևան).			
4.	Եղբարք Պետրոս և Դանիէլ (այժմ հանգուցեալ) Յունանեանց վաճառատունը ամենայն տարի ուղարկելու է մի գիւղական Դպրոցի պահպանութեան համար հինգ հարիւր բուբլի	500	Եղբարց Յունանեանց Դպրոցը բացուած է Քեամարա գաւառի Լիլահան գիւղում.	
	Բագու			
5.	Տիկին Եղիսաբէթ Սարգսեանը ուղարկելու է ամենայն տարի մի գիւղական Դպրոցի պահպանութեան համար ի յիշատակ իւր ամուսնոյ՝ Պօղոս Սարգսեանի երեք հարիւր բուբլի	300	Սարգսեան Դպրոցը բացուած է Փերիա գաւառի Բոյորան գիւղում.	
	Բագու			
6.	«Եղբարք Բուդաղեանք» Առևտրական տունը ուղարկելու է տարեկան 400 բուբլի մի գիւղական Դպրոցի պահպանութեան համար յանուն Բուդաղեան եղբարց	400	Բուդաղեան եղբարց Դպրոցը բացուած է Բուրվարի գաւառի Ֆարաջարադ գիւղում	Ստացուել է 1902—1903 ուսումնական տարվա համար դպրոցի նպաստ
7.	Բագուաբնակ Մեծ. պ. Աստուածատուր Վաչեանը սկսեալ 1903 թուից ամենայն տարի փոխադրելու է մի գիւղական Դպրոցի պահպանութեան համար՝ ի յիշատակ իւր հանգուցեալ ամուսնոյ Մարիամ Վաչեանի՝ երեք հարիւր բուբլի	300		

Զուղայի և գիւղական Դպրոցներին գրքեր նուիրեցին Գերապ. Մակար Եպիսկոպոս Բարխուդարեան (42) Բարձրապատիւ Աշոտ Վարդապետ, Մատթէոս Վարդապետ, Բագրատ Վարդապետ Թաւաքարեան (այժմ հանգուցեալ), պ. Կարապետ Եգեանց (մօտ 300), Բժշկապետ Ա. Բուդուղեան (մօտ 250) Աստուածատուր Վաչեան (260), Կարապետ Կոստանեան, Յովհաննէս Արամեան, Գէորգեան ձեմարանի Վարչութիւնը, Եմմանուէլ քահանայ Նազարեան։

Խորին և անկեղծ շնորհակալութիւն եմ յայտնում վերոյիշեալ բոլոր Մեծարգոյ նուիրատու անձանց՝ օժանդակութիւն ստացող հիմնարկութեանց կառավարիչների և իմ կողմից, որ բարի եղան և միջոց տուեցին բազմաթիւ հայ ուսումնածարաւ մանուկներին կրթուելու և դաստիարակուելու մայրենի լեզուով։

Յունիս ամսին Գերապատիւ Առաջնորդի հետ միասին գնալու ենք Թեմիս գիւղերը շրջելու և աւելի մանրամասն կերպով ծանօթանալու գիւղերի տեղագրութեան և հայ ժողովրդի կարիքների հետ.՚ գուցէ անհրաժեշտ համարուի վերոյիշեալ Դպրոցներից երկու երեքը տեղափոխել այլ յարմարաւոր կեդրոնական գիւղեր. տակաւին այդ հեշտ է, քանի որ չկան Դպրոցի համար յատկացրած շէնքեր։ Մի քանի գիւղական Դպրոցներ կառուցուելու են յաջորդ տարուանից։

Ցամենայն դէպս կատարուած գործը համեմատած պահանջների հետ չափազանց քիչ է։ Ցիշենք, որ պայմանները նպաստաւոր են, շատ գործ կայ կատարելու, ուստի անհրաժեշտ է աւելի մեծ դրամական օժանդակութիւն։ Թող Նուիրատուները միանգամայն ապահով լինին և համոզուած, որ իրենց բոլոր նուէրներն ուրախութեամբ և մեծ շնորհակալութեամբ կգործադրուեն իրենց որոշած բարի նպատակների համար։ Նուիրատուութեանց մանրամասն հաշիւն ու գործադրութեանց եղանակը միշտ կտպագրուի։

ԵՒիայոյս եմ, որ խոստացողներն ևս չեն զլանալ իրենց օժանդակութիւնը վաղօրօք հասցնելու յօգուտ Ազգային կրթական գործի։

Ծանօթութիւն. —

Նուիրատուներն իրենց դրամական նուէրներն ու օժանդակութիւնը կարող են տեղափոխել Պետական և այլ բանկերի կամ Մեծապ. Եղբարց Թումանեանց Առևտրական տան միջոցաւ Թեհրան Գերապատիւ Առաջնորդի կամ իմ անունով Պարսկա—Հնդկաստանի Թեմի (Ն.—Ջուղայի վիճակի և հայ գիւղերի) կրթական հիմնարկութեանց օգտին։

Վերատեսուչ Դպրոցաց Պարսկա—Հնդկաստանի՝
ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆ

Հաստատում եմ սոյն հաշիւը, օրհնելով վերոյիշեալ բոլոր նուիրատուներին։

յ'30 Մայիսի. 1903 Թ. Ն.—Ջուղա (Սպահան)։

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ՊԱՐՍԿԱ—ՀՆԴԿԱՍՏԱՆԻ
ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ

[illegible]

450 [illegible].